

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԵՐՈՒՄ

ՎԱՍԵՄԱՓԱՅԼ ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅ ՆՈՒԲԱՐԻ ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ

ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Տեսեալ Մեր զողբալի և զիրաւազուրկ կացութիւն հոգևոր որդւոց Մերոց և զալէկոծեալ վիճակ Տաճկա–Հայաստանի, Հայրապետական Կոնդակաւ ի 10 Նոյեմբերի 1912 ամի, ընդ համարաւ 1482, Մեք որպէս Ծայրագոյն Պատրիարք և Կաթուղիկոս ամենայն Հայոց, Նշանակեցաք զՎսեմափայլութիւն Ձեր պատգամաւոր և ներկայացուցիչ Մեր առաջի Եւրոպական Պետութեանց վասն աշխատելոյ

և յաջողելոյ զբարելաւումն վիճակի Տաճկահայ ժողովրդեան Մերոյ ի վերայ հիման 61-րդ յօդուածոյ Վեհաժողովոյն Բերլինի։

Ապա ըստ միջնորդութեան Ձերում ի 4-ն յունուարի 1913 ամի կարգեցաք զանդամս Ազգային Պատգամաւորութեան Հայոց ընդ լուսամիտ ղեկավարութեամբ և նախագահութեամբ Ձերով, և Մեք, յուսալով յարգարութիւն Աստուծոյ և ի ճշմարտութիւն Նորա, ամենայն հաւատով և զօրութեամբ հոգւոյս օրհնեցաք զՁեզ, զանկեղծ և զսիրտեռանդն գործունէութիւն Ձեր վասն մարդասէր և սուրբ նպատակի, որ հայի յերջանկութիւն և ի փրկութիւն բազմաչարչար հոգևոր որդւոց Մերոց սիրելեաց և ի պայծառութիւն Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ։

Եւ Դուք, Վսեմափայլ Տէր, առլցեալ հայրենասիրական և մարդասիրական մաքուր զգացմամբք, նուիրեցիք յընթացս հնգետասան ամսոց զանձն Ձեր և, շնորհիւ բարձր հեղինակութեան և հոգեկան կարողութեանց Ձերոց, յաջողութեամբ ի կատար ածիք զեղեալն ի վերայ Ձեր զազգային առաքելութիւն մեծ, յուրախութիւն և ի մխիթարութիւն Մեր և համայն ազգիս Հայոց։

Ցընթացս եռանդուն գործունէութեան Ձերոյ վասն յաջողութեան ինդրոյ բարենորոգութեանց Տաճկա–Հայաստանի և վասն ապահովութեան Տաճկահայոց, Մեք յուսալից սրտիւ և հոգեկան մխիթարութեամբ իրազեկ լինէաք ի բազմաթիւ պարբերական տեղեկագրոց և ի նամակաց Ձերոց և տեսանէաք զհեռատես աշխատանս և զգուշաւոր դիւանագիտական յարաբերութիւնս Ձեր, որպէս ներկայացուցչի Մերոյ և Նախագահի Ազգային Պատգամաւորութեան, ընդ նախարարապետս, նախարարս և դեսպանս Եւրոպական Պետութեանց և ընդ այլ քաղաքական և հասարակական ականաւոր գործիչս լուսաւորեալ ազգաց Եւրոպիոյ, որոց քաջ ըմբռնեալ զբարոյական և զտնտեսական հարստահարութիւնս և զհալածանս Տաճկահայոց, խոստովանեցին ի լուր աշխարհի զանհրաժեշտութիւն հաստատելոյ ի Տաճկա–Հայաստանի զկատարեալ ապահովու-

թիւն կենաց, ընչից և պատուոյ հայոց և զարգարագատ իրաւակարգ վասն յարատև խաղաղութեան Թուրքիոյ և Եւրոպիոյ։

Գոհութեամբ դիտէաք աչօք մտացս ասի ի Մայր Աթոռոյ՝ ի Ս. Էջմիածնէս, եթէ որպիսի խորին գիտակցութեամբ, անյողդողդ կամօք և աննկուն ոգւով պաշտպանէիք զիրաւունս և զարգարացի պահանջս հայոց առաջի պետական-քաղաքական պաշտօնէից և գործչաց, նոյնպէս և ի համաժողովս և յազգեցիկ լրագիրս Եւրոպիոյ։

Երախտագիտութեամբ յիշեմք ասա, զի նախաձեռնութեամբ և պաշտպանութեամբ կառավարութեան Ռուսաց և օժանդակութեամբ Եւրոպական Պետութեանց արդէն իսկ ընկալեալ եղև ի Տաճկաց կառավարութենէ ծրագիր բարենորոգութեանց Տաճկա-Հայաստանի վասն ընդ փոյթ իրաբագործելոյ դայն։ Զբերկրառիթ իրողութիւնս այս Դուք նախապէս աւետեցիք մեզ հեռագրաւ Ձերով ի մայրաքաղաքէն Ֆրանսիոյ. ապա ընկալաք նաև զպատճէն ծրագրի բարենորոգութեանց, որ է առաջին հանգրուան ազգային քաղաքակրթութեան մերոյ և բարգաւաճման Տաճկաստանի։

Արդարև Դուք, արժանաւոր ժառանգ մեծահամբաւ հօր, ազգօգուտ և մարդասէր գործունէութեամբ Ձերով անմահացուցիք զդրուատելի անուն Ձեր և թողիք զյիշատակ բարի և անեղծանելի յազգային պատմութեան մերում. և հաւատամք, զի որպէս այսօր յամենայն կողմանց հոգևոր գաւակունք մեր յայտնեն զՁերմ համակրանս և զերախտագիտական զգացմունս իւրեանց առ Ձեզ, նոյնպէս և ապագայ սերունդք հայոց միշտ և յաւէտ օրհնութեամբ և երախտագիտութեամբ յիշեսցեն զբարի անուն և զազգային գործս Ձեր։

Ուստի և Մեք՝ Մայրագոյն Պատրիարք և Կաթուղիկոս համայն Հայոց, այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով յայտնեմք Վսեմափայլութեան Ձերում զկատարեալ գոհունակութիւն և զսրտագին շնորհակալութիւնս Մեր, սփռելով լիուլի օրհնութիւնս ի վերայ Ձեր, ազնուաշուք զերդաստանիդ և սիրասուն գաւակաց Ձերոց։

Օրհնեմք նաև զանգամս Ազգային Պատգամաւորութեան և զամենայն գործակիցս Ձեր, մաղթելով ի Տեառնէ պարգևել Ձեզ և համայն վաստակաւորաց՝ քաջառողջութիւն և կեանս երջանկաւէտս ընդ յամայր ամս։

Լիայոյս եմք, զի յետ այսորիկ ևս, ի դէպս անհրաժեշտութեան, Դուք՝ որպէս ներկայացուցիչ Մեր, զնոյն ազգօգուտ և զմարդասէր գործունէութիւն ունիք շարունակել վասն կատարեալ յաջողութեան և իրագործման բարենորոգութեանց հայաբնակ գաւառաց Տաճկաստանի, յանդգնութիւն և յերջանկութիւն բազմատանջ հոգևոր զաւակաց Մերոց։

Ողջ լերուք, պահպանեալ ի խնամս ս. Հոգւոյն, զօրացեալ ի Տէր և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 20 փետրուարի 1914 ամի
ըստ Տոմարիս ՌՃԿԳ
ի Հայրապետութեան մերում Գ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ
Թ. 258

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ

Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նահանգեալ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի

Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Տաճկաստանի, Տ. Զաւէն Արքեպիսկոպոսի Տէր Եղիայեան, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական։

Ընկալաք զգրութիւն Ամենապատուութեան Ձերոյ յ19 դեկտեմբերի անցելոյ 1913 ամի թ. 1043, ընդ նորոյ կանոնագրի Ս. Յակոբեանց Վանայ Հայոց Երուսաղէմի, որով խնդրէք Հայրապետական յատուկ կոնդակաւ տալ Ձեզ իրաւունս յայտարարելոյ յանուն Մեր՝ միաբանիցն